Հավելված 2
«ԵՔ-ԲՄԾՁԲ-19/7»* ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին

Սույնով "Հայաուդիտ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայտարարում և հավաստում է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/7»* ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միաժամանակ "Հայաուդիտ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը

1) հայտնում և հավաստում է, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/7»* ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է մրցույթի հրավերով սահմանված՝ "Հայաուդիտ" ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) "Հայաուդիտ" ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս "Հայաուդիտ" ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

2) կից ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)**:

"Հայաուդիտ" ՍՊԸ տնօրեն Հայկ Վարդապետյան

*(ստորագրությունը)*

Կ. Տ.

Digitally signed by VARDAPETYAN HAYK
3605650139
Date: 2019.01.18 10:15:09 GMT+04:00